ՑԱՆԿԱՑԱԾ ՄԱՐԴ ԿԱՐՈՂ Է ՎԱՐԱԿՎԵԼ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿՈՎ

Կապիկի ծաղիկը վարակիչ հիվանդություն է, որն առաջանում է կապիկի ծաղիկի վիրուսից: Յուրաքանչյուր ոք, ով սերտ, անձնական կապի մեջ է եղել կապիկի ծաղիկով հիվանդ մարդու հետ, վտանգի տակ է:

ԻՆՉՊԵՍ Է ՏԱՐԱԾՎՈՒՄ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿԸ

Հայտնի է, որ կապիկի ծաղիկը տարածվում է սերտ, մտերմիկ (ինտիմ) և/կամ երկարատև շփման միջոցով, ներառյալ՝

- Կապիկի ծաղիկով հիվանդ մարդու ցանի, վերքի կեղևի կամ մարմնի հեղուկների հետ մաշկը մաշկին անմիջական շփումը:
- Կապիկի ծաղիկով հիվանդի կողմից օգտագործված առարկաների և գործվածքների հետ շփումը:
- Կապիկի ծաղիկով հիվանդի շնչառական արտազատուկների հետ շփումը:

Դա կարող է առաջանալ՝

- Սեռական հարաբերությունից և այլ մտերմիկ շփումներից, ներառյալ համբուրվելը, մերսումը, գրկախառնությունը:
- Չմաքրված գործվածքների և իրերի (օրինակ՝ հագուստ, անկողնային պարագաներ, սրբիչներ, սեքս-խաղալիքներ) օգտագործման հետևանքով:
- Երկարատև սերտ շփումից, օրինակ՝ շատ մոտ հեռավորությունից դեմառդեմ զրույց երկար ժամանակով (մոտ 3 ժամ կամ ավել):
- Միևնույն տանն ապրելու, նույն անկողնում քնելու կամ կապիկի ծաղիկով հիվանդին խնամելու հետևանքով:

Կապիկի ծաղիկով հիվանդը կարող է վարակել ուրիշներին՝ սկսած ախտանիշների հայտնվելուց մինչև այն պահը, երբ ցանը ապաքինվի, թեփը թափվի և մաշկի նոր շերտ առաջանա: Դա սովորաբար տևում է 2-ից 4 շաբաթ:

Կապիկի ծաղիկ ունեցող հղի անձը կարող է վիրուսը պտղի վրա տարածել ընկերքի միջոցով:

Կապիկի ծաղիկը ՉԻ տարածվում հիվանդ մարդու հետ սովորական զրույցի կամ նրա կողքով անցնելու միջոցով:

ԻՆՉՊԵՍ ՉՎԱՐԱԿՎԵԼ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿՈՎ.

1 ԽՈՒՍԱՓԵՔ ՄԱՇԿԸ ՄԱՇԿԻՆ ԿԱՄ ԵՐԿԱՐԱՏԵՎ ՍԵՐՏ ՇՓՈՒՄԻՑ ԱՅՆ ԱՆՁԻ ՀԵՏ, ՈՎ ՈՒՆԻ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿԻ ԱԽՏԱՆԻՇՆԵՐ

- Ուղղակիորեն մի դիպչեք նրա մարմնի ցանին կամ վերքի կեղևին:
- Մի համբուրեք, գրկեք կամ սեռական հարաբերություններ ունեցեք նրանց հետ (բերանային, հետանցքային, հեշտոցային):

2 ՄԻ ԴԻՊՉԵՔ ԿԵՂՏՈՏ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՆ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ԵՆ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿԻ ԱԽՏԱՆԻՇ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ

- Համատեղ մի օգտագործեք անկողնային պարագաները, սրբիչները, հագուստը կամ վերմակները, եթե դրանք լվացված չեն:

3 ՀԱՃԱԽ ԼՎԱՑԵՔ ՁԵՌՔԵՐԸ

- Օգտագործեք օճառ և ջուր կամ սպիրտային հիմքով ձեռքերի ախտահանիչ միջոց:

4 ՊԱՏՎԱՍՏՎԵՔ, ԵԹԵ ԻՐԱՎԱՍՈՒ ԵՔ

- Մարդիկ, ում համար կապիկի ծաղիկով վարակվելու վտանգը մեծ է, կարող են պատվաստվել՝ նվազեցնելու վարակվելու վտանգը:

Կապիկի ծաղիկի մասին հավելյալ տեղեկությունների համար այցելեք՝
ph.lacounty.gov/Monkeypox 8/26/2022 (Armenian)

County of Los Angeles Public Health